Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2022/2023 թթ. մրցաշրջանի լավագույն մարզչի ընտրության կարգ

1. «Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2022/2023 մրցաշրջանի լավագույն մարզիչ» անվանակարգում ընտրությանը կարող են մասնակցել

1. Մեդիայի ներկայացուցիչները (բացառությամբ ֆուտբոլային որևէ ակումբում աշխատող լրագրողների)
2. Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2022/2023 մրցաշրջանի մասնակից ակումբները (1 ձայն)

2. Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2022/2023 մրցաշրջանի լավագույն մարզիչ» անվանակարգում հաղթողի կոչմանը կարող են հավակնել

Մրցաշրջանի ընթացքում Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի մասնակից թիմերը գլխավորած մարզիչները (ներառյալ այն մարզիչները, ովքեր տարվա ընթացքում գլխավորել են մի քանի ակումբներ, կամ այլևս չեն հանդիսանում որևէ ակումբի գլխավոր մարզիչ), որոնց թեկնածությունն առաջադրվում է ՀՖՖ-ի կողմից:

3. Քվեարկողներին առաջարկվում է վերը նշված սկզբունքով կազմված մարզիչների ցուցակը, որոնցից պետք է ընտրել լավագույն երեքին:

Ակումբների ներկայացուցիչները չեն կարող քվեարկել մրցաշրջանի ընթացքում/ տվյալ պահին իրենց ակումբը ներկայացրած/ներկայացնող թեկնածուի օգտին: Քվեարկությունը պետք է ուղարկել thebest@ffa.am էլհասցեին՝ նշելով քվեարկության տարբերակը, անուն-ազգանուն, լրատվամիջոցի անուն, կցելով լրագրողական բեյջը և լուսանկարը:

4. Միավորների հաշվառումը կատարվելու է հետևյալ կարգով. 1-ին տեղ՝ 5 միավոր, 2-րդ տեղ՝ 3 միավոր, 3-րդ տեղ՝ 1 միավոր:

5. Միավորների հաշվառումը կատարվում է ՀՖՖ հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից, և արդյունքները հրապարակվում են:

6. «Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2022/2023 մրցաշրջանի լավագույն մարզիչ» անվանակարգում առաջին տեղը զբաղեցրած մարզիչը պարգևատրվում է հուշանվերով և ՀՖՖ պատվոգրով: